

Բաց նամակ Բելգիայից

Հարգելի հայրենակիցներ՝

Վերջին շրջանում մենք ականատես ենք, թե ինչպես է հայ առաջադեմ երիտասարդությունը և գիտակից քաղաքացին պայքարում Հայաստանում տեղի ունեցող բնապահպանական անօրինականությունների դեմ:

Բելգիայի հայ ուսանողությունը և երիտասարդությունը մեծ խանդավառությամբ հետևում են այս հիքավի հեղափոխական շարժմանը, որը կոչված է արթնացնել հայ հասարակությանը և ստիպել իշխանություններին հաշվի նստել երկրի իրական տիրոջ՝ ժողովրդի հետ:

Այսօր՝ արդեն իսկ, մի շարք հանքեր շահագործվում են բնապահպանական կանոնների կոպիտ խախտումներով: Կասկածից վեր է, որ մեր հայրենիքի ընդերքի անխնա շահագործումն առանց բնապահպանական անհրաժեշտ նորմերի, տեսանելի ապագայում կբերի աղետալի հետեւանքների՝ ջրի, օդի և հողի թունավորում, անապատացում, գյուղերի դատարկում և ահագնացող արտագաղթ:

Հանքարդունաբերության հետագա ծրագրերի իրականացումը՝ շատ մոտ ապագայում հարցականի տակ կդնի մեր պետության և հայրենիքի գոյությունը: Հանդուրժելի չէ՝ և գալիք սերունդը չի ների նրանց՝ ովքեր հանուն սեփական շահերի պարտադրում են մեր ժողովրդին այս չարագուշակ հեռանկարը:

Չետևաբար, մենք մեր գորակցությունն ու շնորհակալությունն ենք հայտնում այն բոլորին, ովքեր ամեն գնով պայքարում են Թեղուտի չնաշխարհիկ անտառների ոչնչացման և Մաշտոցի պուրակում կրպակների ապօրինի տեղադրման դեմ:

Կոչ ենք անում Հայաստանի իշխանություններին ամենայն պատասխանատվությամբ և լրջությամբ մոտենալ այս հույժ բախտորոշ խնդիրներին՝ այսօր, անհապաղ:

Թոչկանի հաղթանակը հույս է ներշնչում, որ վաղ թե ուշ բոլոր խնդիրներն անպայման կստանան դրական լուծում և քաղաքացիական պայքարը կպսակվի հաղթանակով:

«Հայասա»

Բելգիայի հայ ուսանողական միություն